

## ՎԼԱԴԻՄԻՐ ԱՔՐԱՅԱՄՅԱՆ

### ՄՈՐՄՈՔՆԵՐ

Հավքի նման օրն ի բուն  
Ծռվողուն են, արտորուն  
Եվ հուշերիս թևերին  
Զարթնուն են ձեր արտերուն, -  
Մեր սարերուն ծաղկածուփ,  
Մեր ձորերուն սնկահոտ,  
Թեքված քարե աղբյուրին՝  
Շողով զօծած ձեռ ու ոտ:

Ա՛խ, իմ սարեր, իմ ձորեր,  
Արահետներ մանկության,  
Իմ Գարդմանի գետակներ  
Եվ անտառներ դուք իմ թավ,  
Արդյոք մնում եք էլի,  
Արդյոք մեզ չե՞ք կարոտում,  
Թե ավերել են ընդմիջտ  
Հայրենական տեղ ու տուն:

Ո՞վ մեզ պոկեց մեր հողից,  
Ո՞վ մեզ արեց դադարոյուն,  
Որ ու՛ր-ու՛ր էլ որ լինենք  
Չառնենք դադար,  
Չառնենք քուն:  
Մեր սարի պես սար որտե՞ղ,  
Կա՞ր ուրիշ ձոր մերի պես,  
Մեր անձրևն էլ ուրիշ էր  
Մեր հարսերի նման հեզ.

Մեր նարգիզը ու՞մ մնաց,  
Ու՞մ մնաց երգը լորի,  
Մեր մանուշակն ո՞վ ջարդեց  
Թփերի տակ սալորի...

Ախ, ո՞րն ասեմ, ո՞նց ասեմ,  
Թե ի՞նչ հողմ է մեզ ցրել,  
Չիմացողներն ի՞նչ գիտեն,  
Թե ինչե՛ր ենք կորցրել:

\* \* \*

Ես մի թափառ գնչուի պես  
Տանուկ տվի խաղերի մեջ,  
Հիմա գյուղից-գյուղ եմ գնում՝  
Ոտքս ջուր ու շաղերի մեջ:

Երեկ՝ երգչի հարգ ու պատիվ,  
Շրջապատված ուսյալներով,  
Այսօր՝ խոնարհ մի ջրվոր եմ  
Ուրիշների բաղերի մեջ:

Սիրտ ի՛մ, չկա ուրի՛շ մի սեր,  
Ուրի՛շ մի բախտ այս երկնի տակ,  
Ամեն ինչ էլ անցողիկ է,  
Ինչպես վարդը՝ թաղերի մեջ:

Ուրեմն եկ, իմաստունի  
Աչքով նայիր դու աշխարհին,  
Երջանկություն կոչվող բառն էլ  
Սոսկ փափագ է՝ տաղերի մեջ: